Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ **15.04.2025**

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիության սույն քաղաքականությունը (այսուհետ՝ «Գաղտնիության Քաղաքականություն») տարածվում են «Մեյֆ Իթ Իզի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն», «մենք», «մեզ» և/կամ «մեր») https://washapp.am վեբ դոմեյնով հասանելի կայքի (այսուհետ՝ «Կայք»), և մեր կողմից առաջարկվող ու գործարկվող հավելվածի ու ավտոլվացման ծառայությունների հարթակի (այսուհետ միասին՝ **«WashApp»**) վրա: Սույնով Ընկերությունը հասանելի է դարձնում Կայքը և WashApp-ը Օգտատերերի համար Ընկերության Ընդհանուր Պայմանների (հղումը՝ https://washapp.am/about) և Գաղտնիության սույն Քաղաքականության համաձայն: Գաղտնիության Քաղաքականության մեջ օգտագործվում են Ընդհանուր Պայմանների սահմանումները, եթե այլ սահմանում նախատեսված չէ Գաղտնիության քաղաքականության մեջ: Կայքը և WashApp-ը հասանելի դարձնելու համար մենք հավաքում ենք անձնական տվյալներ մեր Կայքի այցելուներից (այսուհետ՝ "Կայքի Այցելուներ") և մեր Օգտատերերից: Գաղտնիության Քաղաքականության մեջ բոլոր հղումները "դուք" և "ձեր" բառերին նշանակում են Կայքի Այցելուները, Օգտատերերը, և այն անձը, ով ընդունում է Գաղտնիության Քաղաքականությունը իրավաբանական անձ Օգտատիրոջ անունից:

Գաղտնիության Քաղաքականությունը վերաբերում է Ընկերության կողմից հավաքված անձնական տվյալներին, երբ դուք օգտագործում եք մեր Կայքը և/կամ WashApp-ը, կամ այլ կերպ տրամադրում եք մեզ անձնական տվյալներ, ներառյալ մեր հետ կապ հաստատելիս: Խնդրում ենք ուշադիր կարդալ այն՝ հասկանալու համար մեր քաղաքականությունը և թե ինչպես ենք մենք վարվում ձեր անձնական տվյալների հետ: Եթե դուք համաձայն չեք մեր Գաղտնիության Քաղաքականության հետ, խնդրում ենք չներբեռնել, չգրանցվել, մուտք չգործել կամ չօգտագործել Կայքը և/կամ WashApp -ը:

1. ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ

Ընկերությունը ստեղվել և գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան՝ հետևյալ կորպորատիվ տեղեկատվությամբ.
« Մեյֆ Իթ Իզի » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Սայաթ-Նովա 40, 0025:
Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն մենք կարող ենք կազմակերպել և/կամ իրականացնել անձնական տվյալների մշակում և որպես այդպիսին, համարվում ենք անձնական տվյալների մշակող:

2. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունը գիտակցաբար չի հավաքում տեղեկություններ 18 տարին չլրացած անձանցից: Եթե դուք 18 տարեկանից ցածր եք, խնդրում ենք մեզ որևէ անձնական տվյալ չտրամադրել: Մենք խրախուսում ենք ծնողներին և/կամ օրինական ներկայացուցիչներին վերահսկել իրենց երեխաների համացանցի օգտագործումը և օգնել կիրարկել մեր Գաղտնիության Քաղաքականությունը՝ հրահանգելով իրենց երեխաներին երբեք չտրամադրել անձնական տվյալներ առանց իրենց թույլտվության: Եթե դուք հիմք ունեք կարծելու, որ 18 տարին չլրացած երեխան անձնական տվյալներ է տրամադրել Ընկերությանը, խնդրում ենք կապվել **support@washapp.am** էլեկտրոնային հասցեով, և մենք կջնջենք այդպիսի տեղեկությունները մեր տվյալների շտեմարանից:

3. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գաղտնիության Քաղաքականությունը ուժի մեջ է և/կամ վերջին անգամ թարմացվել է վերևում նշված ամսաթվին, սակայն մենք հորդորում ենք ժամանակ առ ժամանակ ստուգել այն, քանի որ մեր Կայքը և/կամ WashApp-ը կարող են փոփոխվել: Արդյունքում, երբեմն կարող է անհրաժեշտ լինել փոփոխություններ կատարել Գաղտնիության

Քաղաքականության մեջ: Ընկերությունն իրավունք է վերապահում ժամանակ առ ժամանակ թարմացնել կամ փոփոխել Գաղտնիության Քաղաքականությունը՝ առանց նախնական ծանուցման: Այնուամենայնիվ, եթե թարմացումը կարող է էականորեն ազդել ձեր իրավունքների վրա, մենք կգործադրենք ողջամիտ ջանքեր, որպեսզի ծանուցենք ձեզ՝ ձեր կողմից տրամադրված հաղորդակցության միջոցով՝ նախքան այդպիսի թարմացումների ուժի մեջ մտնելը: Գաղտնիության Քաղաքականության ցանկացած փոփոխությունից կամ վերանայումից հետո Կայքի և/կամ WashApp-ի ձեր շարունակական օգտագործումը կնշանակի ձեր համաձայնությունը այդպիսի վերանայված Գաղտնիության Քաղաքականության պայմանների հետ:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ընկերությունը պարտավոր է պաշտպանել և չխախտել Օգտատիրոջ անձնական տվյալների վերաբերյալ ցանկացած տեղեկության գաղտնիությունը:
Գաղտնիության Քաղաքականության մեջ նկարագրվում է անձնական տվյալների պաշտպանության՝ Ընկերության որդեգրած քաղաքականությունը և անձնական տվյալների մշակման ձևն ու կարգը: Գաղտնիության Քաղաքականության կիրառելի է Կայքի և WashApp-ի համար, եթե սույնից տարբերվող այլ ծանուցում գրավոր սահմանված չէ Ընկերության կողմից:

5. ՀԱՎԱՔԱԳՐՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Կախված նրանից, թե ինչպես և ինչու եք դուք օգտագործում մեր Կայքը և/կամ WashApp-ը, մենք մշակում ենք անձնական տվյալներ, որոնք ստանում ենք.

- Ուղղակիորեն, երբ դուք եք դրանք տրամադրում մեզ,
- Անուղղակիորեն, ավտոմատացված տեխնոլոգիաների միջոցով, ինչպիսիք են քուքիները, կամ երրորդ անձանցից:

Տեղեկություններ, Որոնք Մենք Ուղղակիորեն Ստանում Ենք Ձեզնից
Ընդհանուր առմամբ, դուք կարող եք այցելել մեր Կայք առանց որևէ անձնական տվյալ տրամադրելու: Եթե դուք դիմում եք մեզ տեղեկատվություն ստանալու նպատակով կամ գրանցվում եք WashApp-ում, մենք հավաքագրում ենք անձնական տվյալներ հետևյալ կերպ:

Կապի Ձևաթղթեր. Եթե դուք կապվում եք մեզ հետ մեր Կայքի, Հավելվածի կամ Հարթակի կապի ձևաթղթի միջոցով, մենք կարող ենք խնդրել ձեզ տրամադրել տեղեկություններ (օրինակ՝ հեռախոսահամարը) ձեզ հետ կապ հաստատելու համար:

Հաշվի Տվյալներ. Երբ ֆիզիկական անձը գրանցվում է որպես Օգտատեր, մենք խնդրում ենք տրամադրել անձնական տվյալներ, օրինակ անձնական հեռախոսահամարը, և ըստ անհրաժեշտության՝ ավտոտրանսպորտային միջոցի պետ. համարանիշը: Իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում մենք հնարավոր է խնդրենք հավելյալ տեղեկատվություն, օրինակ իրավաբանական անձի անվանում, ՀՎՀՀ, և այլն: Հաշվի տվյալները պահանջվում են ձեզ որպես Օգտատեր նույնականացնելու և ձեր հաշիվ(ներ) մուտք գործելու թույլտվություն տալու համար: Տրամադրվող անձնական տվյալները պետք է լինեն ճշգրիտ, արդիական և հավաստի, որի ապահովման պատասխանատվությունը կրում եք Դուք: Եթե Օգտատերը տրամադրում է որևէ կեղծ, ոչ ճշգրիտ կամ թերի տեղեկություն, կամ եթե Ընկերությունը ունի հիմնավոր պատճառներ կասկածի տակ դնելու այդ տեղեկության ճշմարտացիությունը, ճշգրտությունը կամ ամբողջականությունը, ապա այն կարող է մերժել Օգտատիրոջ հետագա մուտքը WashApp հարթակ և/կամ հրաժարվել Ծառայությունների մատուցումից:

Օգտատիրոջ Վճարային Տվյալներ. Ձեր վճարային տվյալները մշակելու համար մենք օգտագործում ենք երրորդ անձ վճարահաշվարկային ծառայություն մատուցողներ, ինչի մասին մենք ավելի մանրամասն բացատրում ենք ստորև՝ Վճարումների Մշակման բաժնում: Այս տեղեկությունները մշակվում են մեր վճարահաշվարկային

ծառայություն մատուցող գործընկերների կողմից, և մենք ստանում ենք վճարման հաստատում, որը մենք այնուհետև կապակցում ենք ձեր Հաշվի Տվյալների և համապատասխան գործարքների հետ:

Հայեցողական Տվյալներ. Ձեր հայեցողությամբ, մենք կարող ենք ստանալ անձնական տվյալներ, եթե դուք որոշում եք օգտագործել Կայֆի և/կամ WashApp-ի ինտերակտիվ հնարավորությունները, ներառյալ մասնակցելով հետազոտությունների, հարցումների, խթանիչ ակցիաների, կապվելով հաճախորդների աջակցության թիմի հետ կամ այլ կերպ կապվելով մեզ հետ:

Տեղեկություններ, Որոնք Մենք Հավաքագրում Ենք Անուղղակիորեն
Սարքի և Օգտագործման Տվյալներ. Երբ ներբեռնում, օգտագործում կամ փոխազդում եք Կայֆի հետ, նույնիսկ եթե հաշիվ չունեք, մենք կամ մեր կողմից լիազորված երրորդ անձինք կարող են ավտոմատ կերպով հավաքել տեղեկություններ ձեր սարքի միջոցով Կայֆի օգտագործման վերաբերյալ: Այս տվյալները հավաքվում են ֆուֆիների և նմանատիպ տեխնոլոգիաների միջոցով և ներառում են տեղեկություններ ձեր սարքի, Կայֆի և/կամ WashApp-ի օգտագործման, հաճախած կայքէջերի և դիտված Ծառայությունների մասին, ինչպես նաև աշխարհագրական տեղորոշման տվյալներ:

Տեղեկություններ Երրորդ Անձանցից. Որոշ դեպքերում մենք մշակում ենք երրորդ անձանցից ստացված անձնական տվյալներ: Նման տվյալներից են, օրինակ՝ վճարահաշվարկային ծառայություն մատուցող գործընկերներից ստացված գործարքային տվյալներ կամ տեղեկություններ, որոնք օգնում են մեզ խարդախությունների կանխարգելման հարցում:

6. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Մենք ուղղակիորեն չենք հավաքագրում ձեր վճարային տվյալները և չենք մշակում դրանք: Մենք օգտագործում ենք երրորդ անձ վճարահաշվարկային ծառայություն մատուցողներ, որոնք հավաքագրում են ձեր վճարային տվյալները մեր անունից՝ գործարքները ավարտին հասցնելու համար: Մենք հասանելիություն չունենք ձեր վճարային քարտի տեղեկություններին: Կորպորատիվ Օգտատերերի դեպքում, եթե մենք տրամադրել ենք վճարման այլ եղանակներ, մենք կարող ենք խնդրել ձեր բանկային տեղեկությունները, օրինակ՝ գումարի վերադարձի դիմումներ մշակելու համար, եթե այդպիսիք կան:

7. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ձեր անձնական տվյալները մշակվում են՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը, այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, Ձեր կողմից ընդունված Ընդհանուր Պայմանները և դրանց անբաժանելի մաս համարվող Գաղտնիության սույն Քաղաքականությունը: Ստորև թվարկվում են իրավական այն հիմնական հիմքերը, որոնց վրա մենք հենվում ենք Ձեր անձնական տվյալները հավաքագրելիս և օգտագործելիս:

Պայմանագրի կատարում. երբ ձեր անձնական տվյալներն անհրաժեշտ են մեր միջև պայմանագիր կնքելու կամ այն կատարելու համար, օրինակ՝ երբ դուք օգտվում եք WashApp-ից:

Համաձայնություն. երբ դուք ուղղակիորեն համաձայնություն եք տվել ձեր անձնական տվյալների օգտագործման համար, օրինակ կապի ձևաթղթերի միջոցով:

Իրավաչափ շահեր. երբ մենք օգտագործում ենք ձեր անձնական տվյալները իրավաչափ շահ հետապնդելու նպատակով, և մեր պատճառները այն օգտագործելու համար գերակայում են ձեր անձնական տվյալների պաշտպանության իրավունքների կրած հավանական վնասին:

Իրավական պարտավորություն. երբ մենք պետք է օգտագործենք ձեր անձնական տվյալները՝ մեր իրավական պարտավորությունները կատարելու համար, օրինակ հարկային հաշվետվություններ տրամադրելու դեպքում:

Իրավական պահանջներ. երբ ձեր անձնական տվյալներն անհրաժեշտ են մեզ իրավական պաշտպանության քայլեր ձեռնարկելու համար:

8. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության հետ առկա իրավահարաբերությունների, Ընկերության կողմից մատուցվող Ծառայությունների շրջանակներում Գաղտնիության սույն Քաղաքականությամբ արտացոլված Ձեր տվյալները կարող են մշակվել ստորև նշված նպատակներով.

- Կայքի հասանելիություն,
- WashApp-ի և Ծառայությունների պատշաճ մատուցում,
- Օգտատերերի սպասարկում,
- Օգտատերերի ինքնության հաստատում և անձնական տվյալների հավաստիության ապահովում,
- WashApp-ի և Ծառայությունների վերաբերյալ ծանուցումների, տեղեկատվական կամ գովազդային (մարքեթինգային նպատակով) տեքստային կամ ձայնային հաղորդագրությունների ուղարկում,
- Ապանձնավորված վիճակագրական տվյալների հավաքագրում և այլ հետազոտությունների իրականացում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ նպատակներով:

9. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Դուք համաձայն եք, որ Ընկերության կողմից Ձեր վերաբերյալ անձնական տվյալները փոխանցվեն ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ տարածքից դուրս գտնվող մեր երրորդ անձ մատակարարներին, որոնք իրականացնում են անձնական տվյալների մշակում, պահպանում և տեղեկատվության տրամադրում: ՀՀ տարածքից դուրս անձնական տվյալների փոխանցումն իրականացվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Մենք կարող ենք տրամադրել Ձեր անձնական տվյալները (փոխանակվել անձնական տվյալներով) Գաղտնիության սույն Քաղաքականությամբ սահմանված նպատակներով և միայն այդ նպատակներն արդարացնող ծավալով և ստորև թվարկված դեպքերում.

- Ծառայությունների մատուցման մեջ ներգրավված կամ Ընկերության գործունեությանը վերաբերող ուսումնասիրություն անցկացնող մատակարարներին և ծառայություն մատուցողներին, այդ թվում՝ Գործընկերներին,
- Ընկերության բաժնետերերին, դուստր և կախյալ ընկերություններին, ներկայացուցչություններին, մասնաճյուղերին,
- Երրորդ անձանց, որոնք կարող են անձնական տվյալները (մասնավորապես հեռախոսահամար) օգտագործել մարքեթինգային նպատակով (որը կարող է արտահայտվել գովազդային բնույթի կարճ SMS հաղորդագրությունների/զանգերի ստացման ձևով և այլն):
- Երրորդ անձանց՝ միացման, միաձուլման, համախմբման, բաժանման կամ կորպորատիվ վերակազմակերպման այլ գործարքի իրականացման նպատակով:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական մարմիններին:

10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Պահպանման ընդհանուր ժամկետներ

Մենք պարբերաբար վերանայում ենք անձնական տվյալների պահպանման ժամկետները՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության պահանջների, ինչպես նաև օգտագործում ենք հետևյալ չափանիշները պահպանման ժամկետները որոշելու համար.

- Ձեր անձնական տվյալների բանակը, բնույթը և զգայունությունը,
- Անձնական տվյալների հավաքագրման և մշակման պատճառները,
- Ձեզ հետ շարունակական հարաբերությունների և մեր Կայքի և/կամ WashApp-ի հասանելիության տրամադրման ժամանակահատվածը,
- Կիրառելի իրավական պահանջները:

Մենք պահպանում ենք անձնական տվյալները այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է Կայքը և/կամ WashApp-ը հասանելի դարձնելու համար: Մենք պարբերաբար ջնջում ենք Կայքը և/կամ WashApp-ը հասանելի դարձնելու համար ոչ էական տեղեկությունները՝ տվյալների պահպանումը նվազագույնի հասցնելու նպատակով: Մենք նաև պահպանում ենք ձեզնից հավաքագրված անձնական տվյալները, երբ ունենք դրա շարունակական իրավաչափ գործարար անհրաժեշտություն (օրինակ՝ կիրառելի իրավական, հարկային կամ հաշվապահական պահանջները պահպանելու համար): Այս դեպքում տեղեկությունները պետք է պահպանվեն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է համապատասխան հնարավոր պահանջների իրականացման համար: Երբ մենք այլևս չունենանք ձեր անձնական տվյալների մշակման շարունակական իրավաչափ գործարար անհրաժեշտություն, մենք կամ կջնջենք, կամ կապանձնավորենք ձեր անձնական տվյալները, օրինակ՝ վիճակագրական օգտագործման համար: Երբ մենք ընտրում ենք ապանձնավորելը, մենք համոզվում ենք, որպեսզի ձեր անձնական տվյալները որևէ կերպ հետ չկապվեն ձեր կամ որևէ Օգտատիրոջ հետ: Եթե ջնջելը հնարավոր չէ (օրինակ՝ բանի որ ձեր անձնական տվյալները պահվել են պահուստային արխիվներում), մենք ձեր անձնական տվյալները ապահով կպահենք և կմեկուսացնենք դրանք հետագա ցանկացած մշակումից, մինչև ջնջումը հնարավոր լինի:

11. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Դուք ունեք «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներ: Դուք իրավունք ունեք հետ կանչել անձնական տվյալները մշակելու մասին Ձեր համաձայնությունը կամ պահանջել ջնջել Ձեր անձնական տվյալները: Սակայն այդ պարագայում, ցավոք, մենք չենք կարող շարունակել Ձեզ հասանելի դարձնել Կայքը և/կամ WashApp-ը կամ շարունակել ձեզ հետ առկա այլ պայմանագրային հարաբերությունները: Բացի այդ, անձնական տվյալների ջնջումը իրավական պահանջների, այլ պարտականությունների և գործոնների պատճառով միշտ չէ, որ հնարավոր է: Ավելի մանրամասն տեղեկատվություն առկա է 10-րդ բաժնում: Այնուամենայնիվ, Դուք կարող եք ցանկացած պահի հրաժարվել Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների մասին հետագա գովազդային բնույթի տեղեկատվություն ստանալուց՝ այդ մասին գրավոր կամ Ընկերության կողմից սահմանված այլ ձևով Ձեր կամահայտնությունը հասցնելու միջոցով: Դուք իրավունք ունեք դիմել Ընկերությանը՝ Ձեր անձնական տվյալները ուղղելու կամ փոփոխելու համար, եթե դրանք սխալ են կամ պետք է թարմացվեն: Դուք իրավունք ունեք բողոք-պահանջ ներկայացնել Ընկերությանը, եթե կարծում եք, որ Ձեր անձնական տվյալները մշակվել են խախտումներով կամ եթե համաձայն չեք Ձեր անձնական տվյալների մշակման կարգի հետ: Բացի այդ, դուք կարող եք բողոք ներկայացնել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին: ՀՀ-ում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինն է ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը:

12. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

Մենք կարևորում ենք Ձեր անձնական տվյալների անվտանգությունը և գործադրում ենք բոլոր ողջամիտ ջանքերն դրանց անվտանգությունն ապահովելու համար: Մշակվող անձնական տվյալների պաշտպանությունն ապահովելու

համար Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ իրավական, կազմակերպչական, տեխնիկական պաշտպանության միջոցներ՝ ՀՀ օրենսդրության և Ընկերության տեխնիկական հնարավորություններին համապատասխան:
Ձեր անձնական տվյալները հասանելի են մեր միայն այն աշխատակիցներին, ովքեր կարիք ունեն դրանք տիրապետելու և միայն Գաղտնիության Քաղաքականությամբ սահմանված նպատակների իրականացման համար անհրաժեշտ չափով ու ժամկետներով: Մեր աշխատակիցները, գործընկերները և մշակվող անձնական տվյալներին մուտք գործելու իրավունք ստացած այլ անձինք ստորագրել են գաղտնի տեղեկատվության չհրապարակման մասին համաձայնագիր, ինչպես նաև զգուշացվել են անձնական տվյալների մշակման ոլորտում ՀՀ գործող օրենսդրության նորմերի և պահանջների խախտման դեպքում հնարավոր պատասխանատվության մասին:
Ձեր անձնական տվյալները պաշտպանելու նպատակով անձնական տվյալներ պարունակող տեղեկություն ստացող մեր բոլոր գործընկերների հետ կնքվող պայմանագրերը պարտադիր պարունակում են գաղտնի տեղեկատվության (այդ թվում անձնական տվյալների) բացահայտումն արգելող դրույթներ:

13. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Գաղտնիության սույն Քաղաքականությունը, ինչպես նաև դրա բոլոր փոփոխությունները ուժի մեջ են մտնում Ընկերության Կայքում և/կամ WashApp-ում հրապարակման պահից և կիրառելի են մինչև Գաղտնիության Քաղաքականությունը ուժի մեջ մտնելը Ընկերության հետ ծագած հարաբերությունների նկատմամբ:
Գաղտնիության Քաղաքականությունն ուժի մեջ մտնելու պահից նրա նախորդ խմբագրությունները համարվում են ուժը կորցրած: Գաղտնիության սույն Քաղաքականության ընդունմամբ տրված համաձայնությունը գործում է մինչև Ընկերության և Ձեր միջև առկա ցանկացած իրավահարաբերությունների դադարումը և Ընկերության նկատմամբ Ձեր ունեցած պարտավորությունների ամբողջական կատարումը, կամ օրենքով սահմանված կարգով՝ ավելի երկար ժամկետով:

14. ԿԱՊԸ ՄԵԶ ՀԵՏ

Գաղտնիության սույն Քաղաքականության հետ կապված հարցեր առաջանալու դեպքում, կարող եք կապվել մեզ հետ ստորև նշված հասցեներով.
էլ. հասցե՝ support@washapp.am
հեռախոսահամար՝ +37494503350